



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

«23» հոկտեմբերի 2019թ.

№ 2/6033-14

Հ Ր Ա Մ Ա Ն

ԳԱՔՐԻԵԼ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԱՆՏՈՆՅԱՆԻ, ՄԱՐԻԱՄ ԳՈԳՅԱՆԻ ԵՎ  
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 55/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական կարգապահությունը խախտելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության մաքսային գործառնությունների բաժնի.

1) ավագ մաքսային տեսուչ Գաբրիել Հրաչիկի Սարգսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը.

2) գլխավոր մաքսային տեսուչ Դավիթ Սեյրանի Անտոնյանի, ավագ մաքսային տեսուչ Մարիամ Գեորգիի Գոգյանի և մաքսային տեսուչ Մարգարիտա Կարապետի Բաղրամյանի նկատմամբ կիրառել «դիտողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանը իրագրելու որջ անձնակազմին:



Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵ